ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/36

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանի կարիքների համար ավտոտրանսպորտային լուսացույցների համակարգի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից 04.06.2021թ. ներկայացված և 04.06.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/36 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 04.06.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 26-ի N1 որոշմամբ հայտարարվել է հրավեր (այսուհետև՝ Հրավեր) «Ավտոտրանսպորտային լուսացույցների համակարգի» մատակարարման նպատակով: Գտնում ենք, որ մրցույթի հրավերում ստորև թվարկված դրույթները չեն համապատասխանում գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին, այն է՝

1. Հրավերի Տեխնիկական բնութագրի 3-րդ կետում նշված է. «Հետիոտնային լուսացույց RS485 ցանցով, ՀԼ1-2-24ՎՉ-RG, լուսադիոդային, 200մմ, կարմիր/ կանաչ անիմացիաով, հարթակների սնման լարումը՝ 24Վ., հզորությունը՝ 5 Վատ»:

Սույն կետում նշված է հետիոտնային հստակ մոդել և նշված՝ RS485 ցանցով, ՀԼ1- 2-24ՎՉ-RG մոդելի մոտ նշված չեն կամ համարժեք բառերը, որը հակասում է ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետին:

2. Հրավերի Տեխնիկական բնութագրի 6-րդ կետում նշված «Ինժեներական վահանակի (RS 485 պորտալ կառավարումով)» համար ներկայացված չէ մանրամասն նկարագիր և նշված չեն կառավարման ֆունկցիաները, ինչպես նաև այն է՝ RS 485 պորտալ կառավարումով Ինժեներական վահանակի մոդելի մոտ նշված չեն կամ համարժեք բառերը, որը նույնպես հակասում է ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետին և 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին:

3. Տեխնիկական բնութագրի Առանձնահատկություններ բաժնում նշված է՝ Հետիոտնային լուսացույց չափսերը՝ 460x250x35 մմ

Հետիոտնային լուսացույց քաշը՝ 4կգ.

Հրավերի Տեխնիկական բնութագրում Հետիոտնային լուսացույցի համար նշված են կոնկրետ քաշ և չափսեր (որը չունի հիմնավորում) և արհեստականորեն սահմանափակում են պոտենցիալ մատակարարվող ապրանքների ցանկը՝ հղում տալով մոդելի, ինչն էլ իր հերթին չի համապատասխանում և Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետին, և 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին: Ինչպես նաև ՀՀ Գնումների օրենքի նշված կետերի պահանջներին չհակասելու համար, անհրաժեշտ է որպեսզի լինի առավելագույն, նվազագույն կամ առնվազն բառերը կամ նշված/արտահայտված լինի որոշակի միջակայքով:

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ ենթակետով՝ խնդրում ենք.

1. Պարտավորեցնել Պատվիրատուին ընդունել նոր որոշում, այն է փոխել թիվ 2021 թվականի մայիսի 26 N 1 որոշմամբ, «ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը՝ վերացնելով սույն բողոքում նշված թերությունները և այն համապատասխանեցնել ՀՀ Գնումների մասին օրենքի պահանջներին,

2. Կամ չկայացած հայտարարել «ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով հայտարարված մրցույթի գնման ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.06.2021թ. ժամը 09:15-ին և 02.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանը (հետայսու՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.06.2021թ. թիվ 467 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով «Ավտոտրանսպորտային լուսացույցների համակարգի» մատակարարման գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագիրը Պատվիրատուի կողմից շարադրվել է այնպես, որ ձեռքբերվող լուսացույցները նմանատիպ և համահունչ լինեն հարևանությամբ գտնվող այլ համայնքներում տեղակայված լուսացույցներին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.06.2021թ. ժամը 09:15-ին և 02.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանի կարիքների համար ավտոտրանսպորտային լուսացույցների համակարգի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ):

2. «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով վիճարկվում է Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր) սահմանված հատկանիշները, որի վերաբերյալ վերջինս բողոքի քննության շրջանակներում որևէ ապացույց կամ հիմնավորում չի ներկայացրել:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանի 08.06.2021թ. թիվ 467 գրությունը, «ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն

դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով՝ ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտի համայնքապետարանի կարիքների համար ավտոտրանսպորտային լուսացույցների համակարգի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ԿՄԲՀ-ԳՀԱՊՁԲ-21/72» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանվել է Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Լուսացույց 3 հատվածամասով՝ լուսադիոդային 300մմ 3սմ հաստությամբ մետաղական իրանով, հարթակների սնման լարումը՝ 12Վ., հզորությունը՝ 10Վատտ

Լուսացույց 3 հատվածամասով՝ կարմիր/կանաչ դեղինի հետ հետհաշվարկային վարկյանացույցով, լուսադիոդային 300մմ 3սմ հաստությամբ մետաղական իրանով, հարթակների սնման լարումը՝ 12Վ., հզորությունը՝ 10Վատտ

Հետիոտնային լուսացույց RS485 ցանցով, ՀԼ1-2-24ՎՁ-RG, լուսադիոդային, 200մմ, կարմիր/կանաչ անիմացիաով, հարթակների սնման լարումը՝24Վ., հզորությունը՝ 5 Վատ

Ղեկավարման գլխավոր տերմինալ բլոկ, երկլարանի կառավարումով, սնման լարումը՝ 220Վ. Հզորությունը՝ 300Վատ

Ղեկավարման տերմինալ բլոկ, երկլարանի կառավարումով, սնման լարումը՝ 24Վ. Հզորությունը՝ 60Վատ

Ինժեներական վահանակ, RS 485 պորտալ կառավարումով

Տեղադրման և գործարկման աշխատանքներ

*Էկրանացված ազդանշանային մալուխ 2*0,75Է*

*Պղնձյա մալուխ 2*4քառ.մմ*

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը. *«Հրավերի Տեխնիկական բնութագրի 3-րդ կետում նշված է. «Հետիոտնային լուսացույց RS485 ցանցով, ՀԼ1-2-24ՎՁ-RG, լուսադիոդային, 200մմ, կարմիր/ կանաչ անիմացիաով, հարթակների սնման լարումը՝ 24Վ., հզորությունը՝ 5 Վատ»:*

Սույն կետում նշված է հետիոտնային հստակ մոդել և նշված՝ RS485 ցանցով, ՀԼ1- 2-24ՎՉ-RG մոդելի մոտ նշված չեն կամ համարժեք բառերը, որը հակասում է ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետին:

Հրավերի Տեխնիկական բնութագրի 6-րդ կետում նշված «Ինժեներական վահանակի (RS 485 պորտալ կառավարումով)» համար ներկայացված չէ մանրամասն նկարագիր և նշված չեն կառավարման ֆունկցիաները, ինչպես նաև այն է՛ RS 485 պորտալ կառավարումով Ինժեներական վահանակի մոդելի մոտ նշված չեն կամ համարժեք բառերը, որը նույնպես հակասում է ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետին և 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին:

Տեխնիկական բնութագրի առանձնահատկություններ բաժնում նշված է՝ Հետիոտնային լուսացույց չափսերը՝ 460x250x35 մմ

Հետիոտնային լուսացույց քաշը՝ 4կգ.

Հրավերի Տեխնիկական բնութագրում Հետիոտնային լուսացույցի համար նշված են կոնկրետ քաշ և չափսեր (որը չունի հիմնավորում) և արհեստականորեն սահմանափակում են պոտենցիալ մատակարարվող ապրանքների ցանկը՝ հղում տալով մոդելի, ինչն էլ իր հերթին չի համապատասխանում և Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետին, և 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին: Ինչպես նաև ՀՀ Գնումների օրենքի նշված կետերի պահանջներին չհակասելու համար, անհրաժեշտ է որպեսզի լինի առավելագույն, նվազագույն կամ առնվազն բառերը կամ նշված/արտահայտված լինի որոշակի միջակայքով»:

Այսպես, որպես բողոքի փաստական հիմք՝ Ընկերության կողմից նշվել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված է հետիոտնային հստակ մոդել ու RS 485 պորտալ կառավարումով ինժեներական վահանակի մոդելը և ՀԼ1- 2-24ՎՉ-RG մոդելը սահմանելիս Պատվիրատուն պետք է նշեր նաև «կամ համարժեք» բառերը, ինչպես նաև նախատեսված է հետիոտնային լուսացույցի չափսեր և քաշ, որի արդյունքում Ընկերությունը գտնում է, որ արհեստականորեն սահմանափակվում է պոտենցիալ մատակարարվող ապրանքների ցանկը՝ հղում տալով մոդելի, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին և 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին:

Վերոնշվածի վերաբերյալ հարկ եմ համարում նշել, որ բողոքի քննության ընթացքում, ինչպես բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին (նիստերին

չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը), այնպես էլ բողոքը վարույթ ընդունելու օրվանից մինչ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու օրը (շուրջ 28 օրվա ընթացքում), «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից բողոքում վկայակոչված փաստերը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել, ուստի գտնում եմ, որ դրա բացասական հետևանքները պետք է կրի բողոքի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերն ապացուցելու պարտավորություն ունեցող կողմը՝ բողոքաբեր «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից 04.06.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**